**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«22» մարտի 2018թ. N 84-Ն

## ՆԱԻՐԱ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի <<գ$^{2}$>> կետով, 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրության 27-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի /ծածկագիր՝ 16-2.2-133/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2018թվականի մարտի 21-ի N 5 որոշումը և Ն. Աղաբաբյանի (2018թվականի մարտի 21-ի մտ. N 32284) անձնական դիմումը

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ ՝

1.Նաիրա Աղաբաբյանին 2018թվականի մարտի 23-ից, մեկ ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի /ծածկագիր՝ 16-2.2-133/ պաշտոնում:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

ՂԵԿԱՎԱՐ Ե. ՏԵՐՏԵՐՅԱՆ

<<22>> մարտի 2018թ.
ք.Երևան